



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 27 ՅՈՒՆԻԱՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԱՄՐՄՍ 23

ՏԵՐՆ Է ՀՈՎԻԻՍ

Տէրը իմ հովիւս է.
 Ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ:
 Զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ,
 հանդարտ ջուրերու ֆոյ ինծի կ'առաջնորդէ:
 Հոգիս կը նորոգէ:
 Իր անունը համար արդարութեան նամբաներու մէջ
 կ'առաջնորդէ ինծի:
 Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պտըտիմ,
 չարէն պիտի չվախնամ,
 որովհետեւ դուն ինծի հետ ես,
 քու ցուպդ ու գաւազանդ՝
 անոնք զիս կը մխիթարեն:
 Սեղան կը պատրաստես իմ առջեւ
 իմ թշնամիներուս դիմաց.
 Իմ գլուխս իւղով կ'օծես,
 իմ բաժակս խիստ լեցուն է:
 Յիրաւի բարեբարութիւնն ու ողորմութիւնը
 ինծի հետ պիտի ըլլան:
 Կեանքիս բոլոր օրերուն մէջ,
 ու շատ օրեր Տիրոջ տունը պիտի բնակիմ:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Ամենասուբ Երրորդութիւն, սուր աշխահիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
 Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
 աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի քու եւ ի գիշերի,
 ի նստիլ ի քան, ի գնայ ի ճանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՅԱԿՈՒ ԼԱԲԱՆԻՆ ՀԵՏ ԿԸ ՍԱԿԱՐԿԷ (30:25-43)

«**Թող քուր որ իմ քեդս ու իմ երկիրս երթամ**»: Հեքաքրքրականօրէն Յակոբ արքայութիւն է որ կը խնդրէ որպէսզի երթայ Լաբանին մօտէն: Հակառակ այն իրողութեան, որ Յակոբ ինք իրաւասութիւնը ունի, որովհետեւ իրեն կը պատկանին իր կիներն ու զաւակները, բայց այս հապտածը ցոյց կու տայ Յակոբի նկարագիրը եւ առաքինութիւնը՝ խոնարհութեան, ազնուութեան, ու մանաւանդ յարգանքի Լաբանի նկատմամբ, հակառակ որ Լաբան զինքը խաբած էր:

Լաբան կը պատասխանէ ըսելով. «**Կ'աղաչեմ քեզի, կեցիր, քանզի փորձով գիտցայ որ Տէրը քեզի համար զիս օրհնեց**»: Նախ ամէն բանէ առաջ Լաբան կ'անդրադառնայ որ իր կեանքին մէջ օրհնութիւն մը կատարուեցաւ, քրուեցաւ, եւ այդ օրհնութիւնը Յակոբի շնորհիւ, քուրողը Տէրը ինք: Սա ցոյց կու տայ, թէ ինչպէս արդարի մը ներկայութիւնը կրնայ օրհնութեան պարճառ դառնալ իր շրջապարհին:

Լաբան կը փորձէ վարձաքրել. «**Քեզի ինչ քամ**»: Բայց Յակոբ երբեք ալ միտք չունի նիւթական վարձաքրութիւն, այլ՝ պարզապէս անցնի հօտերուն մէջէն որպէսզի գապէ, ու իր վարձքը արիկա ըլլայ: Հեքաքրքրական համեմատութիւն մըն է որ կը նմանի Քրիստոսի աշխարհ գալուն, որուն համար յանձն առաւ ծառայութիւն, իսկ այդ ծառայութեան վարձքը եղաւ զարելու իրեն համար արդարները, ինչպէս պիտի ըսէ. «Ես ձեզ այս աշխարհէն գապեցի, դուք այս աշխարհին չէք պատկանիր»:

«**Յակոբ իրեն դալար կաղամախի եւ նուշի ու սօսիի գաւազաններ առաւ եւ անոնց կեղեւները քեդ քեդ հանեց, ...եւ իր կեղուած գաւազանները ջուր խմցնելու աւազաններուն մէջ դրաւ, որպէսզի երբ հօտերը ջուր խմելու գան, այն գաւազանները ոչխարներուն առջեւ ըլլան եւ անոնցք՝ խմելու եկած արեւնին քաքնան**»: Հեքաքրքրական արքայաքրութիւն մը եւ ներկայացումն է, որուն մէջ կայ հոգեւոր իմաստ ու պարգամ, այնպէս ինչպէս Եկեղեցական հայրերը փորձած են անոր մէջ քեանելու հետեւեալը. երեք քարեր քեասկի ծառերու փայտեր, որոնք կը խորհրդանշեն Սուրբ Երրորդութիւնը: Երբ կը կարդանք ու կը համեմատենք Հին Կրակարանի Եօթանասնից թարգմանութիւնը, հեքաքրքրականօրէն առաջին ծառաքեասկը ներկայացումն է որպէս խունկի ծառ, որ խորհրդանիշ է աղօթքի առ Աստուած, ինչպէս պիտի ըսէ Դաւիթ. «Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր»:

Երկրորդ ծառաքեասկը՝ Նշենի, այս պարագային կը խորհրդանշէ քահանայութիւնը Քրիստոսի, Անոր ընծայումը, ինչպէս որ էր պարագան Ահարոնին, ու անոր ծաղկեալ գաւազանին (Թուոց 17:6-8):

Իսկ երրորդ ծառաքեասկը՝ Սօսի, որ կը խորհրդանշէ Սուրբ Հոգիի պտուղները: Ի վերջոյ, այս բոլորը կը խորհրդանշեն, ինչպէս ոչխարները երբ ջուր խմելու պիտի գային անոնց առջեւ քաքնալու, նոյնպէս ալ հաւաքացեալները Սուրբ Երրորդութեան ներկայութեան ջերմացնելու իրենց հոգիները: Տակաւին, անոնց աղօթքները, որ կը բարձրանան առ Աստուած, որպէս խունկ բանաւոր ընդունելի պատարագ: Իսկ Քրիստոս որպէս ճշմարիտ Քահանայապետը, որ ինքզինքը ընծայեց մարդկութեան փրկութեան: Եւ ի վերջոյ, Սուրբ Հոգիի շնորհները, որ կը լեցնէ հաւաքացեալներուն կեանքը:

Տակաւին, քիչիկ մըն ալ անդին անցնելով, Դաւիթ պիտի ըսէ. «Զու ցուպդ եւ քու գաւազանդ, որոնք զիս կը մխիթարեն» (Սաղմոս 23:4): Եւ այսպէղ բացատրութիւնը ինչ է եթէ ոչ Աստուծոյ ներկայութիւնը, որ մարդս կ'առաջնորդէ, կը մխիթարէ ու կը զօրացնէ:

Ահա Յակոբ այդ գաւազաններուն կեղեւները հանեց, որ կրնայ նաեւ խորհրդանշել, թէ ինչպէս Քրիստոս եկաւ եւ անցեալի մարգարէութեան պարգամները բացապրեց, վերցնելով անոնց վրայէն շղարշը, քօղը, որոնց քակ կ'երեւի ճերմակը, այսինքն այդ պարգամներուն սրբութիւնը, մաքրութիւնը, եւ անով կարենալ քաքնալու համար: Եւ այդ պարգամները բոլորն ալ կը խօսէին նոյնինքն Քրիստոսի մասին:

Եւ ահա Յակոբ իր ոչխարները գապ կը դնէր Լաբանի ոչխարներէն, եւ անոնք զօրաւոր էին քան Լաբանին ոչխարները: Այնպէս ինչպէս Քրիստոսի ոչխարները, որոնք գապ են, ու պէտք է որ գապ ըլլան առանց խառնուելու աշխարհիկ ոչխարներուն հետ, եւ անոնք Քրիստոսով զօրաւոր են: